

ՆԱՐԵԿԱՑԻՒ ԱՃԻՒՆՆԵՐՈՒՆ ՄՕՏ

(ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ)

Հ. ԱՐՄԷՆ ՂԱԶԻԿԵԱՆԻՆ

Այնպիսի քաղաքէն լեռնային ճամբով 6-7 ժամ հեռու, փոքր մատուռ մը կար, 9 դարու հնութիւնը ծնրադիր իր սրբատաշ քարերուն, ժողովուրդին հաւատքն ու ջերմ հոանդութիւնը անշէջ պահող մատուցարան մը անոր քովիկը, եւ բակին մէջ զլզլացող ու հեծող աղբերակ մը, որուն ամէն մէկ կաթիլը սպեղանի էր ցաւատանջ հոգիներուն:

Այդ սրբավայրը իր մէջ կ'ամփոփէր մեծ քերթողին, Նարեկացիի աճիւնները, ըստ աւանդութեան, փոխադրուած իշխանագուններու կողմէ, հին փառքերու բեկորներուն հետ:

Ամէն տարի, մասնաւորաբար Վարդափառին, հեռաւոր ու մօտակայ գիւղերէն, քաղաքներէն ուխտաւորներու համար հազար բազմութիւններ կը փլէին, կու գային լեցնել ամբողջ լեռնադաշտը, որուն կեղծոնը, Արակա գիւղէն քիչ վեր կը կենար մատուռը մենաւորիկ:

* *

Պատանեկան տարիքը նոր թեւակոխած էի, երբ երկրորդ անգամ ուխտի եկայ հոն, խառնուած մեր գիւղի կարաւանին:

Ուրբաթ առաւօտ, մութնուլուսուն, ամէն ոք, հետեւակ ու ձիաւոր, կազմ ու պատրաստ էր: Արեգակը լեռներուն կատարը կարմիր վեղարներ նետած էր: Մեծադր մինակ կը կենար հեռուն, սպիտակ թարթիչները սեւեռած կապոյտին:

Հատիկ հատիկ կամ փոքր խումբերով ուխտաւորները դուրս կու գային գիւղէն: Մերձակայ գիւղերէն, վերի ու վարի հանդերու ամառանոցներէն ալ հետգհետէ կը հասնէին, եւ Մարտկերի աղբիւրէն անդին ամէնքը կը գտնէին զիրար:

Ի՛նչ ոգեւորութիւն եւ ի՛նչ խնդութիւն: Երգի մեղանուշ ժապաւէններ կ'երկարէին իրարու ետեւէ, ամայի ճամբուն վրայ, որ ոլորապտոյտ կ'անցնէր լեռան ստորտէն, Հարսնփախէն, Մարտուկի վերով, դէպ ի Բակեր, ջորեպաններու գիւղը:

Արեւը առեր էր ամէն կողմ: Ուխտաւորները ճամբու գնդներն իրենց կայանն ունէին: Բարտիններով եզերուած մարգագետին մը, առատ, ինքնարուխ ջուր եւ ըմպելիի մեծարանք: Կարծես իրական բաժանում տեղի ունենար: Հրաժեշտի մեկներ, ալակօղիներ, ջութակի ու դափի ընկերակցութեամբ, կարօտի եւ ուրախութեան արցունքներ, բարեմաղթութիւններ, աղօթքներ ու սրտառուչ պատկերներ բաժանումի:

Կարաւանը կը յառաջանար դանդաղ, ցան ու ցիր, բայց պաշտպանուած: Աճապարանք չկար: Երկու օրուան վրայ կիսուած էր ճամբան: Առաջին օրը պէտք էր իջնանիլ Ռեհանի ջուրը:

Կէս օրուան ճաշը տեղի ունեցաւ Մագմանի լեռան բարձունքներուն վրայ: Հագիւ մէկ ժամէն կարելի եղաւ մէկտեղել ուխտաւորները, որոնք քանի մը հարիւրէ աւելի էին: Ոտաւորները, ոմանք բոպիկ,

ոմանք շալկով, այնպէս ինչպէս կամեցած էին, ետ մնացեր էին: Բայց պէտք էր սպասել բոլորին. կապը չխզել: Վախուտեղեր կային, կրնար վտանգ պատահիլ: Հիւանդները ջորիներուն վրայ կը ճաշէին: Ոմանք վանդակորմերու մէջ նստած՝ արեւուն դէմ, կիսովին արդէն բժշկուած էին: Միւս կէսը վերապահուած էր իրենց հաւատքին զօրութեանը:

* *

Հիմայ լեռնադաշտն էր ծայր կու տար: Առողջ ու զովարար օդը գրեթէ անզգալի կը դարձնէր տապը: Լերի, չհերկուած գետիկներ կը տարածուէին մեր երկու կողմերը: Չուր չկար, բուսականութիւն չկար: Կարաւանը կը ստանար կրկին եռփուն վիճակ: Ուրախութեան աղաղակներ, մենեղներ կ'երկարաձգուէին լեռնային դառնութիւնի երկայնքին: Ջրարշաւի փորձեր, զինարձակութիւններ եւ խօլ խաղեր կը յաջորդէին իրարու:

Յանկարծ լսելի եղաւ հերթական հաշոցը զամբոներու, լեռնարլուրի մը ստորտէն: Եւ սկսանք իրարու ցոյց տալ վրանները վաչկատուն ցեղերուն: Անոնց որոնք ամէն առէն մեզի իւղ, պանիր ու բուրդ կը բերէին: Լեռներու տէրերն էին: Հօտերու, երամակներու տէր, անոնցմով կ'ապրէին: Աւազակութեան արհեստն ալ իրենց սեփականութիւնն էր, սակայն չափազանց հիւրասէր ճանչցուած էին իրենց վրաններուն տակ: Տիկերով ու դոյլերով առատ թան բերին մեզի ծախու: Անյազօրէն խմեցինք բոլորն ալ, ու շարունակեցինք մեր ճամբան: Երեւոյթը կրկնուեցաւ մէկէ աւելի անգամներ:

Դաշտագետինն խորը մութ ոսկեգոյն լճակ մը, շրջապատուած սէզներով ու ճախճախուտով, կարծես կը հոսէր ինք իր մէջ, կը բխէր ամբողջութեամբ ու փրփուր կը նետէր եզերքներուն: Աւանդութեան շրջանէր եզերքներուն: Աւանդութեան շրջանէր ամբողջութեամբ թէ այս այն լճակն է ուր ժամանակին յարդի դէզեր լեցուցած են, որոնց փոտրները գետինն ներ-

քեւէն եկած դուրս ելած են Ակնայ մեծ ջուրին ալունքէն: Չափ ու սահման ունի միթէ ժողովուրդին միամտութիւնը:

Կ'անցնէինք: Ծառեր, կանաչութիւններ եւ հնձուած արտեր կ'երեւան: Ռեհանի ջուրն է: Արդարեւ վայրի ռեհանի բարկ բուրում մը կը խողտացնէ մեր ռնգունքը: Ամէն ոք կը սկսի տեղաւորուիլ: Շրջանակներ կը ձեւանան:

Մօտիկ ազգականներ կը միանան, կու գան իրարու քովիկ: Իջեալը յարդարուած է: Տեղ տեղ վրաններ կը զարնուին: Կենդանիները սկսած են արդէն ճարակել խոտերուն վրայ: Մատաղցու ոչխարները ծառերուն կը կապեն: Նորէն երգ, ուրախութիւն: Իրիկունը մեր դէմքը զգուշով կը տոգունի, կը սահի տակաւ ձորակն ի վար: Չուրէ զրկուած ձուկերու պէս, փոքրիկներ ոտաբոպիկ կը վազվառտն ձորակին մէջ գոյացած աւազաններու լայնքին ու երկայնքին. կարծես կարօտը կ'առնեն իրենց ծննդավայրի անհամար առուներուն եւ ակերուն: Ռեհանի փունջեր կը կազմեն, կը բերեն իրենց մեծերուն: Խումբ մը չարաճճիներ կը իայ մը բռնած հանդէս կը սարքէին: Վրան կը նստին. կը բալեցնեն իրենց ուզած ուղղութեամբ: Կը չարչարեն: Խեղճ կենդանիին հոգին կը հանեն, զուարճանալու համար: Յետոյ կը պահեն խոտի ահագին դէզի մը տակ, դժուարութեամբ վերցնելով անոր ծայրը: Քիչ ետք նայիս բեռան տակէն ճողպարած կենդանին կը փախի, տղաքն ալ ետեւէն:

Օդը կը զովանայ արեւմարէն ետք: Կը կծկուինք մեր գոյքերուն քովիկը: Օրուան մեր տպաւորութիւնները կը յայտնենք մէկգմէկու: Յոգնութիւննիս առած, ճաշած ենք բոլորս ալ: Սովոր ենք արդէն բացօթեայ գիշերել, աստղերուն տակ, ջուրի ձայնին ունկնդիր: Քունը կը ծանրանայ մեր կոպերուն վրայ անուշ անուշ:

* *

Արեւածագը մեզմէ կանուխ իր նայուածքն է նետեր հորիզոններուն:

Մեկնումի ազգանշանը տրուած է: Պէտք է փութալ, ժամ առաջ ոտք կոխել Արա- կու հողը: Տեղ բռնել քաղցր ուխտաւոր- ներէն առաջ: Անոնք խոյարի ճամբան բռնած են: Տակաւին կան աւելի մօտիկ վայրերու ժողովուրդները:

Աւելի զօրացած, աւելի կենսուրախ կա- րաւանը կը շտկուի առաջ: Չիաւորներու խումբ մը կը սկսի արշաւել: Լռաստոր/տրին բողբոսիքը պիտի կրնայ տեղ ճարել, մեր վրանները հոն զարնելու համար: Ամէնէն յարգի վայրն է կ'ըսեն. կէս մը սրբա- տեղի կը համարուի: Այդ սրբադիւրիւն առջեւ է որ հաւատաւոր հիւանդներէն շա- տեր կը բժշկուին, մատուռ չհասած: Հա- մբեր լեզու կ'ելլեն, ջղագարներ կը զգաս- տանան, կոյրերուն աչքը կը բացուի, կա- դեր եւ հաշմանդամներ ձիւրիտ կը խաղան իրենց ուրախութենէն. վերջապէս պէս պէս ցաւերու զեղ ու դարման են Նարե- կայ օդն ու ջուրը, մեծագոր սուրբին հող- վրտիքը կազմող ամէն ինչ:

— Գոնէ Զօյկի Գերեզմանին քովէրը կարենային տեղ գրաւել: Դատ անգամ- ներ Արակա եկող ծերունիի մը ձայնն է կը լսուի:

Կը հետաքրքրուին: Կ'ուզենք գիտնալ թէ ո՞վ է այդ հովիւը:

— Այլազգի է, կը յարէ ծերուկը: Նա- րեկացիին հաւատացող մը, որ Անոր հրաշ- քին զօրութենէն բժշկուած, քրիստոնեայ դարձած է, բայց ետքէն զարնուած ու հոն թաղուած է:

Լուռ երկիւղածութիւն մը կը համակէ մեր պատանի հոգիները:

Գրեթէ մօտեցած ենք սրբավայրին:

Մեր ձիաւորներէն մէկը ետ կու գայ ու կարաւանը կ'առաջնորդէ նախապա- տրաստուած տեղը: Լաւագոյն դիրքերէն մէկը:

*
* *

Շրջավայրը, մարդիկ եւ ամէն ինչ կը փոխուին: Տեղաւորուելէ վերջ, ընկերովի, առաջին գործերնիս կ'ըլլայ մատուռ եր- թալ, երկու ծունկ աղօթք ընել եւ սուրբ

բանաստեղծին աստուածային զօրութենէն անմասն չմնալ: Ի՞նչ դժուարութեամբ կը յաջողինք բազմութիւնը ձեղքել:

Ընդարձակ հրապարակը ծածկուած է ամբողջ: Աղմուկ, իրարանցում: Վրանները աւելի հեռունեն են: Փեթակներ են կար- ծես քով քովի շարուած: Մեղունները պարս տուած են: Կը վժան փրփուրի պէս: Նոր նոր կարաւաններ ալ կը հասնին: Գիւ- ղացիներ թան, մածուն եւ պտուղ կը ծա- խեն: Փոքրիկ տաղաւարներ շինուած են եկեղեցիներու կողմէ: Առուծախ կ'ընեն: Եր- կու հոգի ալ սրբաջուր կը ծախեն: Կ'ընդ- վզինք: Ինչո՞ւ իր գունէն չխմել զայն: Կը մօտենանք աղբիւրին: Իրարու ձեռքէ կը խլեն ամէն մէկ պուտը: Ինչքան ալ նուազ կը հոսի: Մեր գիւղին աղբիւրնն են որ վրադ գլուխդ կը թրջեն. չեն թո- դուր որ մօտենաս, այնքան ուժով կը ցատկէ ջուրը անոնցմէ: Վերջապէս ափիկ մըն ալ մեզի բաժին կ'իյնայ: Քիչ անդին, արդէն եզերքէն առուակ մը կ'իջնէ ուղիղ դէպ ի գիւղ: Կը հետեւինք անոր: Գրեթէ գետնայարկ, հողէ տուններ ու տանիքներ: Գիւղացին արտ ու կալը թողած ուխտա-ւորներով կը զբաղի: Օրեր առաջ ուտե- լիք, թան ու մածուն պատրաստած է: Մենք ալ կը խմենք թանձր թանէն առատ առատ, ու կը բարձրանանք վեր, մերին- ներուն քով: Կէսօրուան ճաշի համար մեզի կը սպասեն անհամբեր:

Դաբաթ կէսօրին, ալ գալիք ուխտաւոր չէր մնար: Եկած կ'ըլլային նաեւ քաղա- քին առաջնորդը, քահանաներ, տիրացու- ներ: Եկեղեցական արարողութիւնը կը սկսէր կոչնակահարութենէ վերջ: Փոքրիկ մատուռ մը եւ հազարաւոր ժողովուրդ: Թափող թափողի: Մենք կոչնակի ձայնէն զատ բան չիմացանք. չկրցանք յառաջա- նալ: Ժամերգութեան աւարտումին՝ երբ ամէն ոք իր վրանը դարձաւ, արեւմարէն առաջ, մատաղցու ոչխարները զենուե- ցան: Օճախներ պատրաստուեցան եւ կաթ- սաները սկսան եռալ, զբոսալ: Մինչեւ լոյս ամէն դի խրախճանութիւն: Տեսակ տեսակ նուազներ, տոհմիկ երգեր, եւ զընօլ

զոռնանք քունը փախցուցին մենէ մղոն- ներով հեռու: Աստղերը մօտիկցան, կա- խուեցան վար եւ մինչեւ առտու ցօղ ու մանանայ սրսկեցին հաւատացեալներու այդ բանակին վրայ: Նարեկացիի թախ- ծութիւնը փոխակերպուեցաւ խնդութեան ու զեղումի:

*
* *

Վարդավառի լուսարաց:

Հրաշքի առաւօտ:

Նաւասարդեան փողերուն արձագանգը լսելի կ'ըլլայ սրբածոր մեղեդիներու խո- բունկէն: Նոյն արիւնն է որ կը պղպջայ երակներու մէջ: Արու ոգին կը սաւառնի լեռնադաշտին վերեւ:

Ժողովուրդը երկնղած է:

Կիներ, ծերունիներ եւ անչափահաս- ներ կանուխէն բռնած են մատուռին ներսն ու դուրսը: Պատարագը սկսած է: Խոնկի բուլաներ կը բարձրանան, կը տարածուին ու կը ցրուին: Օրհնութիւն կը տեղայ օդին մէջ: Անդամադրելի պակուցումով հոգի- ները կը զօրացնեն իրենց օրուան տօնին հետ:

Մինչ ասդին երիտասարդութիւնը կրկէս է նետուած:

Մարգարաշտ մըն է կազմուել եւ տե- սակ տեսակ խաղարկութիւններու հանդի- սատես կ'ըլլայ ստուար բազմութիւն մը: Սրախաղութիւն եւ ըմբշամարտ կը յա- ջորդեն իրարու: Անձերը կը փոխուին միշտ: Այդտեղ են բոլոր վայրերու անուանի մար- զիկները, նշանաւորները, լարախաղաց- ները, ֆաբլիկները, բարի ծաղիկները, ի- ընց տեղական տարազներով: Մրցումէ առաջ գրաւներ: Իւրաքանչիւր տեղացի վստահ է միայն իր ուժերուն:

Մատաղները ասդին եփած, օրհնուած՝ բաշխելու կը սկսին:

Դատեր յափշտակութեամբ ժամարար վարդապետին քարոզը կը պատմեն չի- մացողներուն: Վարդավառի խորհուրդը, մեկնութիւնը, հեթանոսական տօներու հետ ունեցած առնչութիւնը, բայց մանաւանդ Նարեկացիին հրաշագործութիւնները: Յի-

սուս մուրացիկի կերպարանքով ներկայա- ցեր է անոր, ճամբուն վրայ. փորձեր է զայն եւ յետոյ յայտնուել ու անյայտա- ցեր է: Առտեր կղզիին մէջ եւս իրեն յայտ- նուել են Աստուածածինն ու Միածինը միատեղ: Հապա աստուածային տեսիլը, անշէջ մորենին: Իր անթիւ անհամար բժշկութիւնները:

Պատարագի միջոցին Սուրբին մասունքը կը բացուի: Ներկայ գտնուողներ մեզ հա-ւաստեցին բժշկութիւնը ախտաժէտ հի-ւանդներու, այսահարներու: Անոնք սրբ- տայոյդ աղաղակներով ունկնդրած են բը- ժրշկութեան աւետարանը, եւ մասունքը համբուրելուն պէս աղէկցած են:

*
* *

Նոր թափով ու եռանդով կը շարու- նախուի կայթատօնը Վարդավառի, մին- չեւ ուշ գիշեր: Առուակին ջուրը կը ցամբի իրարու նետելէն: Կը մտաբերենք հայրե- նիքի զուլալ ջրերը, թեւով ու գրկով քա- լերէն դուրս նետուող փառասնակի աղբիւր- ները, պարտէզներուն մէջ շաչող ակերն ու շատրուանները, պսպղուն աւազանները, որոնք հազիւ կը բաւեն Վարդավառը սօ- նելու: Մինչդեռ այս լեռնամարդին վրայ երկու ակունք կան միայն, սակաւահոս ու պղտոր:

Վերջին գիշերն է: Խրախճանութիւն- ները ամէնէն տաք մթնոլորտը կը ստեղ- ծեն: Ըմպելիներ գունեան, տեսակ տեսակ, անընդհատ կը թափին փարչերէն ու սրբ- ուակներէն: Զիւով դափերը, ջութակ ու քէմանչէ, սազ ու պուլղարի, արմօնիկ, զոռնա, թմբուկ ու փող, բոլորը մէկ կը հնչեն ու խառնուին մարդկային ձայնին, թոհ ու բոհին, ձիերու վրնչիւնին եւ հրա- զէններու պայթիւնին:

Եւ այս բոլորը առանց վտանգի տեղի չեն ունենար:

Երկուշաբթի առտու ամէն ինչ խաղա- ղած է: Կամաց կամաց պատրաստութիւն- ներ կը տեսնուին վերապարձի համար: Սրուակները կը լեցուին օրհնած ջուրով,

Լուսաղբիւրի ջուրով: Մատաղները կիսովին կը փաթթուին յովաշ հացերու մէջ: Զորինները կը բեռնաւորուին: Ու կէսօրուան ճաշէն ետք մեր կարաւանը կը քաշուի, կ'իյնայ ճամբայ դէպ ի ետ, դէպ ի Ռեհանի Զորը, ուր դարձեալ կը գիշերենք, եւ յաջորդ օր առանց հապճեպի, շէն ու զուարթ կ'իջնենք Մազմանի լեռնէն վար: Երբ կը հանդիպինք մեր բաժանման աղբիւրը, բարտիններով եզերուած, հոն կը զանենք առաջնորդներու խումբ մը, նուագածուններով, ըմպելիներով, թթուանուշ միրգերով միասին:

Ողջագութներ: Նորէն ուրախութիւն, դափ ու նուագ, հայրենարարձ երգեր, որոնց երկարաձգուող ժապաւէնը կ'իյնայ, կը փշրուի մեր գեղի լեռներուն ու խըն-

կագոյն այգիներուն վերեւ, արշալոյսը շղարշող մշուշի ծուկներու պէս:

* *

Տարիներ ետք սրտի սեղմումով գրի կ'առնեմ այս յիշատակները:

Երբ այսօր չկայ այլեւս այդ ուխտաւ՝ վայրը, երբ վտիտ մոմ մը իսկ չի պլպլար, պտղունց մը խունկ չի հալիւր անոր դաբաւոր խորանին առջեւ, երբ իր պատերը փլփլած, աղբիւրը մեռած եւ իր բիւրաւոր հաւատացեալները հողին ու աւազին խառնուած են իր հրաշքի մասունքին պէս, դառնօրէն կը խորհիմ. — միթէ մեզի՞ էր վիճակուած տեսնել եւ փառքը եւ փրկուշու մնացեալին:

Թ. Ա.Ա.Ս.Ս.

Տ Խ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ունայն տեղ հոգիս դուն կ'այրիս բոցով
Ունայն տեղ քընարդ խառնած զեփիւռին,
Արտոյտի նըման կ'անցնիս երգելով
Բարիքներն հազար գալիք զարունին:

Թախծոտ ցընորք են քեզ ծաղիկ ու սէր
Դու սուգը ծընար միայն երգելու,
Թէ երազովդ ալ տեսնես կուսաններ
Վէրքերդ կու գան հերով ջընջելու:

Ոսկեղէն ամպեր կ'անցնին քո վերով
Քեզ ինչ կը մընայ — Երկինքը պարապ,
Քո անոյշ խօսքերն, արցունքը խըռով
Զերդ սառին վրայ ինկած յորդ տարափ:

Ա՛խ իմ վառ աչքեր, իմ սեւ ճըրագներ
Դուք բացուած էիք կապոյտ ծաղիկ մ'պէս,
Ուր ամէն զարուն, ամէն տենչանք ձեր
Ինձ խորհրդաւոր ոսկի հէքեաթ էր:

Հաճոյքն ինձ այստեղ անցաւոր ըստուեր
Իմ ցաւն է միայն անսահման ու խոր,
Ոչինչ կայ սփոփիչ քան լուռ արցունքներ,
Ոչինչ սըրբազան մարդէն սըգաւոր:

20 փետր. 1931

Հ. Վ. ՅՈՎԱՆԵՆԻՍՅԱՆ

Կ Ա Ր Օ Տ Ե Թ Ո Ւ Ն Է

ՀՕՐԱ՝ ՈՐ ՀԵՌՈՒՆ Է

Աչքերս քու բարութեանդ հորիզոնին առջեւ բացած,
Կ'ուզեմ մտածումս ու հոգիս իրարու հետ եղբայրօրէն դաշնակել,
Ու հայրենի երգիքներուս մոխրագոյն կատարին վրայէն,
Անհետացած անցեալի մը քաղցրութիւնը մէկ անգամէն արբէնալ:
Որովհետեւ խղճմտանքիս զիտակցութեամբը ես, այսօր, կը հաւտամ որ
Մեր սիրտերուն միջեւ ձգուած հեռուի անդունդն անեզեր,
Իր համբոյրին ու սիրոյն մէջ տկարութիւն չի ճանչնար...

Կը յիշեմ որ շատ փոքր էի, ու հազիւ թէ վեց զարուններ ողջունած
Օշականի իմաստութեան ու ճանաչման վարդապետը եռամեծ,
Դեռ չէր հաճիր իմ մանկական մատներուս մէջ, այն օրերուն,
Բացատրութեան եւ գիտութեան սուրբ բանալին դնելու:
Ո՛հ, ինչ հրճուանք էր, ուրախութեան ու ժրպիտի ինչ անսահման փոթորիկ,
Տղու հոգիս ինչ խնդրութեամբ կը պարուրուէր, երբ իրիկուան ընթրիքը
Այգիներու ու դաշտերու բարութեամբը կը լեցուէր:
Հացին երգը իմ մանկական սուրբ քնարս էր երկնատուր,
Ու աղօթքիս մըմունջը, քու հոգիէդ արտացոլած,
Օրհնութիւնը կը դառնար աւանդական մեր սեղանին:
Գու աղնարկդ բաւական էր, որ թխագոյն մատներովս,
Ամէն հացին ու ընթրիքին, խաչին ձեւը կուրծքիս վրայ գծազրէի,
Վաղուան համար նոյն բարիքը ուզելու մեր հայրերուն Աստուծմէն...

Մենք նոյն ժամուն տրտում էինք, մեր հայրենի երգին վրայ,
Երբ արեւը կ'երթար հեռուն մարելու, մեր լեռներու զոգերուն մէջ:
Ոսկեկուտակ արտին վրայ, ուր ցորենը մարդու հասակ էր առեր,
Ուր հասկերը մինչեւ գետին խոնարհած, մանգաղներու բարութեան կը սպասէին.
Մեծ Եփրատի ծոցերէն դուրս արտաբուրող երեկոյեան մեղմ սիւզը
Լոյսի ծովեր կը գծազրէր, երանգներով ներդաշնակ.
Ու դրացի այգիներուն դաւարագեղ ու թաւապատ որթերուն մէջ,
Ծիրանեփառ լոյս խաղողը հանդարտօրէն կը մեծնար:
Հայրենատուր մեր Եփրատին ահազափազ գնացքը,
Մեր յոյսերուն եւ տեսիլքին աւագանն էր այդ պահուն,
Ու մըմունջի մեր վանկերը զուարթօրէն կը մարէին
Խորութեան մէջն իր ալբերուն ու ջուրերուն...